

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ԲԱՌ-ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ Ա. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՎԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՄ¹

Ա. Ներսես Շնորհալին հեղինակ է 300-ից ավելի հանելուկների՝ հոգեւոր եւ աշխարհիկ բովանդակությամբ: Բանաստեղծը հանելուկները խմբավորել է ըստ նրանց լուծումներին համապատասխանող բնագավառների. կատարել է իմաստաթեմատիկ դասակարգում:

Հոգվածում վերլուծվում է Շնորհալու «Գետ», «Ձուկն», «Ջրաղաց», «Ցորեն», «Մաղ», «Գարի» պատասխան-վերնագրերով հանելուկների խումբը, որում հանելուկները կառուցվել են ոչ թե պարզ այլաբանական հենքի վրա, այլ արտացոլում են խորհրդաբանական ըմբռնումներ: Դրանց քննությունը ցույց է տալիս, որ խորհրդանշանների հոգեւոր բովանդակության հիմքում Աստվածաշունչ մատյանն է: Գեղարվեստական պատկերները, խորհրդակիր բառերը նրբին երանգավորումներով ու ակնարկներով կապվում են Քրիստոսի երկրային կյանքի դրվագների հետ, խորհրդանշում են Քրիստոսին եւ առանցքային դեր ունեն մատնանշված հանելուկները նույն թեմայի շուրջ համախմբելու հարցում: Իմաստային առումով տրամաբանված եւ նպատակային է նաեւ հանելուկների դասակարգման սկզբունքը խմբի ներսում:

Ներսես Շնորհալու հանելուկների գիտակցված, որոշակի ծրագրով եւ սկզբունքով դասակարգված լինելուն անդրադարձել է Աս. Մնացականյանը: Ոսումնասիրելով հանելուկների՝ դեռեւս 1321 թ. կազմված շարքի պատասխանների ցանկը՝ նա նկատում է թեմատիկ խմբավորումներն ու միավորների ներքին հաջորդականությունը եւ առանձնացնում ավելի քան 19 շարք²:

¹* Ստացվել է՝ 21.09.2023, գրախոսվել է՝ 25.09.2023:

էլ. հասցե՝ vorskanyan.heriknaz@mail.ru:

² Աս. ՄՆԱԶԱԿԱՆՅԱՆ, Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), Երեւան, 1980, էջ 88–89:

Քննվող խումբն ընդգրկում է 11 հանելուկ: Նրանցում կիրառված ալլաբերություններն Աստվածության խորհրդանիշներ են՝ Սուրբ Գրքից արտածված, եւ գաղափարական առումով դառնում են այն շեշտակիր բառերը, որոնց շուրջ համախմբվում են հանելուկներն ու թեմատիկ միասնություն կազմում:

Առաջին հանելուկի պատասխանն է «Գետ»: Հանելուկային պատկերի ալլաբանական ատաղձը կառուցվում է առարկաների արտաքին նմանության հիման վրա: Համեմատության եզրերն են օձ, կապույտ գույն, պտույտ-պտույտ բառերն ու բառակապակցությունները: Իբրեւ ընդհանուր նմանողություն՝ ընդգծվում է նաեւ շարժվելու, գալարվելու հանգամանքը.

Օձ մի կայր գունով կապոյտ,
Հետ գայր՝ ւ առնոյր պտոյտ-պտոյտ.

Հաջորդ երկու տողերը, խնդրի լուծման համար ստեղծելով նոր գուգակցումներ, առավել են իմաստավորում հանելուկային պատկերի նշանակությունը.

Յիւր փորն կայր այն բարոյն գիւտ,
Որ ի ցամաքն մեռնի շուտ:

Ընդգծվում է գետի եւս մեկ էական հատկանիշ, թեեւ այն քողարկվում է փոր, բարոյն գիւտ եզրույթներով՝ վերջինիս՝ ցամաքում շուտ մեռնելու հատկության մատնանշմամբ: Ընթերցողի համար իբրեւ պատասխանի հուշում կարող է ընկալվել հաջորդ հանելուկի «Ձուկն» վերնագիրը: Ցամաքում շուտ մեռնողը ձուկն է, որն արդեն լիովին բացահայտում է «Գետ» հանելուկում արտացոլված պատկերների եւ գուշակվող առարկայի կապը:

«Ձուկն» հանելուկը բերված է երկու տարբերակով, որոնցում թռչնի հետ համեմատության եզրը ձկան սուր ընթացքն է, գետն ալլաբանվում է որպես շարժուն տուն, լուծման առարկան բնորոշվում է բնավ չքնելու եւ անհամեմատելի սիրուն լինելու հատկանիշներով:

Հաջորդ՝ ջաղացին նվիրված հանելուկը կառուցված է պատկերային հակադրության վրա.

Ոմն ի յէիցս էր անկենդան,
Ձայնիւ գոչէր ահեղական,

Յընթրիս կոչէր զազգս մարդկան,
Յիւր փսխածէն ածէր սեղան (էջ 263):

Ասվում է, թե մի անկենդան կա, որը գոչում էր ահեղ ձայնով: Նկատի ունի ջաղացի պտտվող քարի, ջրի եւ ցորենի հետ շփվելու աղմուկը:

Ցորենն ալյուրի է վերածում, այսինքն՝ մարդկանց ընթրիքի է կոչում՝ սեղանին դնելով իր փսխածը. ցորենն ուտում է եւ տեղն ալյուր է տալիս: Ալյուրը բերանով, փորով, պորտով կամ կողքերով դուրս հանելու պատկերը լայնորեն կիրառված է ժողովրդական հանելուկներում՝ Մեչկով ուտւմ ա, // բերնով դուս ածւմ³, որովհետեւ այն դիտարկվել է իբրեւ որակական կարեւոր հատկանիշ՝ ճանաչելու համար հանելուկային առարկան:

Շնորհալու՝ ջաղացին նվիրված հանելուկը բերված է չորս տարբերակով: Առաջին տարբերակի վերջին երեք տողերը դժվար է մեկնաբանել.

Կերան փաղցեալն եւ յագեցան,
Եւ կապեալն յարձակեցան,
Եւ արձակեալն կապեցան (էջ 263):

Երկրորդ տարբերակը՝ մի փոքր այլ ոճավորմամբ, առաջինի կրկնությունն է՝ առանց վերջին երեք տողերի: Այստեղ շեշտվում է, որ թեեւ անկենդան է, բայց կերակրող է կենդանիներին՝ ողջերին, ընթրիքի է կանչում «զորդիս մարդկան»:

Առաջինի տարբերակն է եւ երրորդը՝ առավել սեղմ եւ խիտ. ընդգրկում է միայն առաջին չորս տողը եւ գրված է ներկա ժամանակով:

Թեեւ անկենդան-կենդանի (ողջ) հակադրության երկրորդ եզրը սքողված է, բայց «զազգս մարդկան» արտահայտության հետ զուգահեռում ընկալելի է դառնում: Հոգեւոր առումով իմաստավորվում, իբրեւ Աստվածաշնչյան այլաբանություններ շեշտակիր են դառնում հանելուկի անկենդան, անեղական, ընթրիք, մարդկանց ուղիներ բառերը:

Չորրորդ հանելուկը որեւէ ձեւով նման չէ մյուս երեքին եւ իր չորս տողում տալիս է ջրաղացի կառուցվածքը:

Մինն ի յանդունդըս տառապէր,
Մինն ի յերեսըն թփանէր,

³ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, էջ 174:

Գլխովն ծափըս հառկանէր,
Զկենաւարըն մեր բերէր (էջ 265):

Առաջին տողը ներկայացնում է հոսող գետի խորքում գտնվող անիվը: Երկրորդ տողում ասվում է, որ այդ անիվի պտտվելով՝ ջուրը թափվում է՝ «թքանէր»: Այն իր հերթին պտտեցնում է երկանաքարը, որն աղում է ցորենը՝ մեզ բերելով կենարարը՝ ալյուր հացը:

Շնորհալու քաջատեղյակությունը զարմանք է հարուցում: Հետագոյն Հ. Բեգլարյանը հանգամանորեն նկարագրել է միջնադարյան Հայաստանի ջրաղացների կառուցվածքը. «Լիսեռի վրա ամրացված է մեծ թափանիվը՝ մի ալլավելի փոքր թափանիվի հետ, որի վրա մի կողմից ատամներ կան: Սրանք շփվում են ուղղահայաց տնկված լիսեռին, որը նույնպես ատամներ ունի եւ մի ծայրով միացած է վերին աղացքարին: Զրի ուժը պտտական շարժում է հաղորդում առաջին անիվին եւ փոխանցման կարգով շարժումը հաղորդում է ջրաղացքարին»⁴: Գործել են երկու տիպի՝ ուղղահայաց եւ հորիզոնական թափանիվ ունեցող ջրաղացներ, որոնց կառուցվածքը համարյա նույնն էր, տարբեր էին թափանիվից քարին պտտական շարժումներ հաղորդելու եղանակները: Անդրադառնալով Շնորհալու հանելուկին՝ Հ. Բեգլարյանը գրում է, որ հեղինակն ակնհայտորեն նկարագրել է երկրորդ տիպի ջրաղացը. «Պարզ երեւում է, որ առաջին տողը վերաբերում է փոսի մեջ տեղավորված պտտվող թափանիվին, հաջորդը՝ նավին կամ ճնշման խողովակին, որից ջուրը ցայտում է թափանիվի վրա, իսկ երրորդը՝ պտտվող եւ աղմկող ջրաղացքարին»⁵:

Շնորհալին հանելուկը կառուցել է՝ վարպետորեն տալով ջրաղացի նկարագիրը:

Ակնհայտորեն նրա հանելուկի հետեւողությամբ է հորինված անհայտ հեղինակի հանելուկը (ԺԳ.-ԺԴ. դդ.), կրկին հակադրության վրա կառուցված պատկերներում բացվում են հանելուկի իմաստային հոգեւոր ներքին շերտերը: Զրաղացի խաղալը, այսինքն՝ պտտվելը, մահ է բերում բազումներին, ալյուր-արյունը, որ հոսում է, ինչպես ուռնգերից, կյանք է շնորհում:

⁴ Հ. Բեգլարյան, Զրաղացները միջնադարյան Հայաստանում, ԼՀԳ, թ. 10, 1985, էջ 68: Զրաղացների կառուցվածքի նկարագրությունը տես նաեւ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ, Հայաստանի եւ Արցախի ջրաղացները, Երեւան, 2022, էջ 9-10:

⁵ Հ. Բեգլարյան, նշ. աշխ., էջ 69:

Ձորից նիւթից գունդ մի շինած,
 Խիստ պինդ եւ բուս ի խոնաւած,
 Ի խաղալ գնդին տայր մահ բազմաց
 Արիւնն հոսէր գերդ ոլնկաց
 Ի անտի շնորհէր կեանս աշխարհաց (էջ 379):

Թափվող սպիտակ ալյուրը ռունգերից հոսող կարմիր արյան հետ նույնացնելը առաջին տպավորությունը արտասովոր է, բայց հասկանալի է դառնում աղացվել-մեռնելու եւ վերջին տողի՝ մահով ապրողներին կյանք շնորհելու ենթիմաստում՝ հաց-կյանք արժեւորումով: Ժողովրդական հանելուկում այլաբանությունը չունի նման ենթիմաստ. Կարմիր ուտեմ, // ձերմագ ածեմ⁶. կարմիրը ցորենն է, սպիտակը՝ ալյուրը:

Ավելի ուշ՝ ԺԷ. դդ. հորինված հանելուկում, որի հեղինակը Ստեփանոս Դաշտեցին է, երեւոյթների արտաքին նմանությունը ստեղծված այլաբանական պատկերներն արդեն այլ շեշտադրում չունեն, քան առարկայի կամ երեւոյթի ճանաչումը. այլեւս չի դրվում հոգեւոր իմաստավորման խնդիրը.

Կառուցեալ կամ մերձ հոսանաց, նոֆօ պարիմ,
 Ատամամբք իմ երբեմն հողմօ կառավարիմ,
 Չունիմ զբերան, միշտ անդադար տան ինձ ուտել
 Եւ զաւելորդն յորովայնիս ինքեանք կոտել (էջ 418):

Իրենց պատկերավորությամբ եւ խորհրդաբանությամբ առանձնանում են նաեւ Ներսես Շնորհալու՝ ցորենին նվիրված հանելուկները: Դրան նպաստում է նախ եւ առաջ դիմառնությունը, որով մարդկային հատկանիշներ են հաղորդվում ցորենին.

Մեռանիմ եւ մահանամ,
 Դարձեալ յառնեմ, կենդանանամ,
 Զաչս ի յերկինքս համբառնամ,

Բազմաստեղօք պայծառանամ⁷:

Հանելուկում տրվում է ցորենի հատիկի՝ հողում թաղվելու, ծլելու, դեպի երկինք ձգվելու, հասկ դառնալու գեղեցիկ պատկերը, որն ինքնին առատություն խորհրդանշել է:

⁶ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 174:

⁷ ԱՍ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 265 (այսուհետ հանելուկների էջերը կնշենք բնագրում՝ մեջբերման ավարտին):

Գրականագետ Հ. Բախչինյանն իրավացիորեն նկատել է, որ հանելուկում «արտացոլվում է այդ կենսաբեր մշակաբույսի (նույնն է թե՛ հացի) պաշտամունքը մեր ժողովրդի մեջ, իբրեւ մեռնող եւ հարուստուն առնող աստվածություն»⁸: Աս. Մնացականյանը, անդրադառնալով հանելուկին, նշել է, որ ցորենը հանդես է եկել իբրեւ հատիկային աստվածության խորհրդանիշ⁹: Ս. Հարությունյանը ցորենի մասին հանելուկները կապել է երկրագործական հնագույն պաշտամունքների հետ, որոնք պատմականորեն վկայված են հինարեւելյան եւ արեւելամիջերկրածովային քաղաքակրթություններից, միեւնույն ժամանակ ընդունել, որ դրանք հիշեցնում են Քրիստոսի կյանքն ու տանջանքները¹⁰:

Շնորհալու հանելուկի մեռանիմ-մահանամ, հառնեմ-կենդանանամ բառերն իրենց այլաբանական նշանակությամբ մղում են ընթերցողին դեպի հոգեւոր իրողություն, եւ հանելուկի շորս տողերը դառնում են պատկերային զարգացումը ցորենի մասին Քրիստոսի այն խոսքերի, որ եթե ցորենի հատիկը մահանա, բազում արդյունք կտա, իսկ եթե ոչ, ապա մեռնակ կմնա. «Ամէն, ամեն, ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» (Յովհ. ԺԲ. 24):

Հանելուկում հարազատորեն արտահայտված է ցորենի հատիկի՝ մեռնելով կենդանանալու, հասկի հատիկներով՝ որպես աչքերով, երկինք նայելու գաղափարը՝ բազում հատիկները՝ «բազմաստեղօք»:

Մարմնով մեռնելու եւ հոգեպես հարուստուն առնելու գաղափարը բանաստեղծական գրեթե նմանատիպ պատկերով Շնորհալին արտացոլել է «Ողբ Եդեսիոյ» քերթվածում: Որդեկորույս մայրը հյուսում է մխիթարության ու հույսի երգը՝ հավատալով, որ մարմնապես մեռած որդիները՝ իբրեւ ձմռանը հողի տակ պահվող, մինչեւ գարուն պարարտացող, կենաց ցողով սնվող ցորենի հատիկներ, բողբոջելու են եւ ձգվելու երկինք¹¹.

⁸ Հ. ԲԱԽՉԻՆՅԱՆ, Հայ միջնադարյան բանաստեղծությունը, Բ., Մինչեւ Շնորհալի եւ հետո (11–12-րդ դդ.), Երեւան, 2022, էջ 193:

⁹ ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Հայկական զարդարվեստ. հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը, Երեւան, 1955, էջ 128:

¹⁰ Ս. АРУТЮНЯН, Отражение древневосточной жатвенной мифологии в загадке о пшенице, ІՀԳ, 1969, № 11, էջ 67–77: Տե՛ս նաեւ Ս. ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ, Հայ առասպելաբանություն, Երեւան, 2018, էջ 361:

¹¹ Տե՛ս Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ, Այլաբանությունները Ներսես Շնորհալու պատկերային համակարգում, ԲԵՀ, № 2, 1988, էջ 150–151: Տե՛ս նաեւ Հ. ՈՐՍԿԱՆՅԱՆ, Ներսես Շնորհալու պոեմները, Երեւան, 2006, էջ 72–73:

Ի ձմերայնի վաստակեցի,
 յանձրեաբերս սերմանեցի,
 Զցորեանն ի հողն թաղեցի,
 Յորում նեխեալ անդ լուծանի:
 Եղեմնապատ սառամբ լինի
 եւ ձիւնաթաղ ամբողջ պանի,
 Մինչ ի գարուն հողով ծածկի,
 ամեթացեալ պարարտաւջի,
 Յործամ կենաց ցօղոյն արբի,
 Վաղվաղակի բուսանիցի.
 Որոտընդոստ վերաբերի,
 Յանկարծակի վերեւելի,
 Որպէս ծաղիկ բողբոջիցի,
 Սաղարթագեղ պանունիցի:
 Ծառոյն կենաց մերձեալ հպի,
 Ի մահացունէն այլ ոչ խաբի,
 Բաղմաբեղուն ստեղն արձակի,
 Մինչ ի յերկինս հասանի¹²:

Հատկանշական է, որ ԺԲ. դարում Ներսես Շնորհալին, եղեսիւ քաղաքի կործանման պատճառը բացատրելով բնակիչների, այդ թվում քահանաների՝ սուրբ խորհրդի սպասավորների՝ մեղքի ախտում թաղված լինելով, հետամտում է մարդու վերափոխման, այս կյանքում արդարամիտ ու ազնիվ ապրելու նպատակ:

Բարոյական կործանումը, ի վերջո, հանգեցնում է մարմնավոր կործանման:

Շնորհալու՝ ցորենին նվիրված հաջորդ հանելուկը եւս հիմնված է ցորենի մասին Քրիստոսի խոսքերի վրա.

Ի տրամադրելն կարծրանամ,
 Ի հոսմանէն եւ զօրանամ,
 Ըզբլորից կեանս բառնամ,
 Միոյն անթիւ փոխանակ տամ (էջ 267):

Հանելուկում ասվում է, որ հատիկը հոսվելուց՝ սերմանելուց, ամրանում է, զորանում: Առաջին տպավորությունը բուն աշխատանքային

¹² «Մատենագիրք Հայոց», հտ. ԻԱ., ԺԲ. դար, Ներսես Շնորհալի, գք. Ա., Երեւան, 2018, էջ 198:

երեւույթն է պատկերավոր նկարագրվում, երբ հատիկը հողում պահ տալուց հետո այն ծածկել են՝ լծկան անասունների միջոցով հողը տրորել պնդացնելով կամ նորից հերկելով¹³: Այլաբանական շերտում հանելուկի առաջին երկու տողերը հիշեցնում են աստվածաշնչյան խոսքը՝ մեռյալների հարուխյան մասին, որ տկարությանմ է սերմանվում եւ զորությանմ ելնում (Կորնթ. Ա. ԺԵ. 43): Մեկ թույլ հատիկից մինչեւ լեցուն հասկի «ճանապարհը» Ագաթանգեղոսը զուգահեռում է սաղմոսի տողերին, քանզի լալով են գնում նրանք, որ իրենց ցանելու սերմն են տանում (Սաղմ. ՃԻԵ. 6), եւ մեկնաբանում, թե դրանք վշտեր են եւ չարչարանքներ, որ հասնում են մեզ աստվածապաշտության պատճառով, սակայն երբ ցորենի խուրձը հնձի ժամանակ սերմանողներին մատուցի պարարտ, բերրի պտուղը, նրա հետ եւ ուրախալի, բերկրալի ցնծություն կբերի ամենքին¹⁴:

Հանելուկի վերջին տողը, որում ասված է, թե մեկի փոխարեն անթիվն է տալիս, վերցված է «Սերմնացանի առակից»։ «Եւ բերէր ընդ միոյ երեսուն, եւ ընդ միոյ վաթսուն, եւ ընդ միոյ հարիւր» (Մարկ. Դ. 8, նաեւ՝ Դուկ. Ը. 8, Մատթ. ԺԳ. 8): Պարարտ հողում բազում պտուղ տալը, ըստ Հովհաննես Ծործորեցու, «ցուցանէ, թէ սակաւ են վաստակքն, եւ բազում են փառքն»¹⁵:

Ջրաղացի եւ ցորենի հանելուկների հետ կապվում եւ հետաքրքիր շերտեր է բացում Շնորհալու՝ մաղին նվիրված հանելուկը, որ թվում է, թե զուտ ազգագրական արժեք ունի.

Երկնից յանգոյն յար ընթանամ,
Երկրի նման ես անշարժ կամ,
Ի համբուրից մերձ որոտամ,
Անձրեւ հեղում մաննայ նման (էջ 266):

Առաջին երկու տողերում արտահայտվել են նաեւ Շնորհալու տիեզերագիտական ըմբռնումները, թե երկինքը շարժման մեջ է, իսկ երկիրը՝ անշարժ: Զարմանալի է, որ Շնորհալին Շիրակացուց հետո նման միտք է հայտնում:

¹³ Վ. ԲԳՈՅԱՆ, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երեւան, 1972, էջ 302–304. «էմինեան ազգագրական ժողովածու», հտ. Ա., 1901, Մոսկուա–Ալեքսանդրապոլ, էջ 276:

¹⁴ «Ագաթանգեղայ պատմութիւն», Վենետիկ, Սուրբ Դազար, 1862, էջ 92:

¹⁵ ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԱՆՈՒ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ ԾՈՐԾՈՐԵՅԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԼԵՏԱՐԱՆԻՆ որ ըստ Մատթէոսի, Կոստանդնուպոլիս, 1825, էջ 296:

Հանելուկում դարձյալ պատկերային հակադրություններ, առաջին դեմքով ասվում է, թե երկնքի նման շարունակ պտտվում եւ երկրի նման անշարժ է: Հավանաբար ջրաղացի մաղն է, որը, պտտվելով իր առանցքի շուրջը, անշարժ է մնում՝ չի տեղաշարժվում: Համբույրից որոտալն էլ, ըստ երեւույթին, ճայթյունն է աղացվող ցորենի հատիկների, որոնք, լցվելով մաղի մեջ, ցած են թափվում մանանայի նման:

Հայտնի է, որ մաղերի տարբեր տեսակներ են եղել, որոնք ունեցել են իրենց առանձին դերերը¹⁶: Անկախ տեսակներից՝ Շնորհալին հենվել է ոչ թե մաղի արտաքին հատկանիշի վրա՝ կլոր մաղ – շրջանաձեւ երկինք զուգահեռով, այլ հմտորեն կերպավորել է մաղին բնորոշ գործառույթն ու հատկանիշներն աշխատանքի պահին այնպես, որ ընթերցողը կամ ունկնդիրը կարողանում է ճանաչել այն՝ աչքի առաջ ունենալով մաղի պարուրաձեւ պտույտներն ու ալյուրի թափվելը:

Նկատենք, որ ալյուրմաղին նվիրված ժողովրդական հանելուկներից շատերը կերտված են նույն՝ մաղ–երկինք (աստված) զուգահեռով՝ Պունուր աստոծ (վ. երկինք), // Տակին ձին ա գալի¹⁷, եւ ընդգծվում է նաեւ երկնքի շարժումը՝ Ամպն օրորա-օրորա, // Ամպի տակը ձյուն տորորա (մեղմ թափվել)¹⁸: Մեկ այլ հանելուկում թմբուկը հիշեցնում է Շնորհալու հանելուկի՝ համբույրից որոտալու ձայն պատկերը՝ արդեն ձյուն–լուսավորիչ (սպիտակ–լույս) հետաքրքիր զուգորդմամբ. Թըփը, թըփը նաղարա (թմբուկ), // Լուսավորիչը մէջը կը խաղա¹⁹: Երեք հանելուկները միասին կարծես վերա-կերտում են Շնորհալու հանելուկի այլաբանական պատկերները:

Թե՛ ջաղացը, թե՛ մաղը հիշատակվում են մեռնող-հառնող աստվածների հետ կապված հնագույն ծեսերում: Ս. Հարությունյանը, վկայակոչելով Ժ. դարի արաբ մատենագիր Ան-Նադիմի հաղորդումը, որ Հայաստանին սահմանակից Խառանում (Եդեսիայում), որը մասամբ բնակեցված էր հայերով, ասորի հեթանոսները տոնել են մեռնող-հառնող Թամմուզ աստծու տոնը, Ֆրեզերի գրքից մեջբերում է հետևյալ տողերը. «Կանայք վշտով ողբում էին աստծու ճակատագիրը, քանզի տերը դաժանորեն սպանել էր նրան, աղացել ջրաղացում նրա ոսկորները եւ հետո դրանք տվել քամուն»²⁰:

¹⁶ Վ. ԲԴՅԱՆ, Երկրագործական մշակույթը Հայաստանում, էջ 425:

¹⁷ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 143:

¹⁸ Անդ:

¹⁹ Անդ:

²⁰ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ առասպելաբանություն, Երևան, 2018, էջ 362:

Շնորհալու՝ վերը նշված հանելուկների ստեղծագործական մտահղացման հիմքում կարելի է տեսնել վաղնջական այդ պատկերացումների ազդեցությունը՝ ցուրեն, ջրաղաց, մաղ խորհրդանշանների կիրառությունը: Շնորհալին եղել է «ամենալաւ եւ մտերմական յարաբերութեան մէջ ասորական վանքերի հետ»²¹, խմբագրել է ասորական գրականությունից թարգմանված գործեր²², իր «Ողբ Եդեսիոյ» քերթվածով արձագանքել է նաեւ ԺԲ. դ. ասորական գրականության մեջ ծագած բանավեճերին²³, մշտապես շփումներ են եղել Կիլիկիայում ապրող հայերի եւ ասորիների միջեւ, ուստի հավանական է, որ Շնորհալին ծանոթ էր նաեւ ասորական հնագույն մշակույթին:

Եւ, այնուամենայնիվ, Շնորհալին հանելուկներում կիրառել է խորհրդանշաններ, որոնք կապվում են քրիստոնեական աշխարհընկալման հետ. ջրաղացի եւ մաղի գործողություններն արժեւորվում են տված արդյունքով, որ մի դեպքում ամբողջանում է Կենաւաւ, մյուս դեպքում՝ Մանանա բառերով: Իբրեւ փոխաբերություն-այլաբերություններ՝ այդ բառերը խորհրդանշում են Աստծուն՝ «Աստուած հաց կենաց, երկնային մանանայ եւ անծախելի պտուղ, որ ակնարկութեամբ քո լցուցանես զդաշտս երկնաւոր պարարտութեամբ...»,²⁴ եւ նաեւ գրականության մեջ են կիրառվել միասին²⁵: Աստծու ուղարկած երկնային հացին, որը փրկում է իսրայելացիներին Սինա անապատում, նրանք կոչվում են մանանա (Ելից ԺԶ. 1–31): Յորենը, Կենարար ալյուրն ու Մանանան կապվում են համաբնագրային (կոնտեքստային) կապով եւ իմաստային նույն ազդեցությունն են ունենում Քրիստոսի «Ես եմ հացն կենաց» խոսքի տիրույթում՝ դառնալով Քրիստոսի խորհրդանշանները²⁶: Քրիստոսն ասում է. «Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ:

²¹ Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆՅ, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Ս. էջմիածին, 1908, էջ 268:

²² Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Ասորիների դերը Հայկական Կիլիկիոյ մշակութային կյանքում ԺԲ.–ԺԳ. դարերում, Վենետիկ, 1989, էջ 26–31:

²³ «Ներսէս Շնորհալի» (հոգվածների ժողովածու), Երեւան, 1977, էջ 204–211: Տե՛ս նաեւ՝ Հ. ՈՐՍԿԱՆՅԱՆ, Ներսէս Շնորհալու պոեմները, էջ 52–56:

²⁴ Մայր Մաշտոց, հտ. Ա., գք. Ա., աշխատասիրութեամբ՝ Գ. ՏԵՐ-Վարդանեանի, Ս. էջմիածին, 2012, էջ 414:

²⁵ Իր բանաստեղծություններից մեկում Ֆրիկը գրում է. «Որդին անմահ եւ կենդանի՝ Հացն երկնաւոր եւ Մանանայ»: Տե՛ս Հ. ԲԱԽԶԻՆՅԱՆ, Ֆրիկի բանաստեղծական ժառանգությունը. բնագրեր եւ քննություն, Երեւան, 2021, էջ 95:

²⁶ Կենաց հաց եւ Մանանա խորհրդանշանների մասին տե՛ս նաեւ Հ. ԲԱԽԶԻՆՅԱՆ, Հայ միջնադարյան բանաստեղծությունը, Ա., Ոսկեդարից մինչեւ Նարեկացի, 5–10-րդ դդ.,

Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ, կեցցէ ի յաւիտեան. եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի» (Յովհ. Զ. 35, 51–53): Գրիգոր Տաթեւացու մեկնությամբ՝ «Ներգործութիւն է հացին պահել զկենդանութիւն մարմնոյ, իսկ Քրիստոս ոչ միայն պահէ զկենդանութիւն, այլ եւ կեանս տալ հոգեւոր եւ յաւիտենական: Եւ այս է երրորդ բանն՝ ցուցանելով, թէ Աստուած է Քրիստոս, զի մարմին նորա հաց կենաց է եւ անմահութեան»²⁷: Այս ըմբռնմամբ էլ պատարագի ժամանակ Հացն ընկալվում է որպէս Քրիստոսի մարմին: Հանելուկներում շեշտվում է հացի հոգեւոր ըմբռնումը: Այն անապական է, հոգեւոր կերակուր, որը զորացնում է հոգին:

Այսպիսով՝ Շնորհալին հանելուկներում խորհրդանշանները կիրառել է որպէս Քրիստոսի այլաբերություններ՝ Նրա երկրային կյանքի հոգեւոր խորհուրդի հստակ մեկնաբանությամբ: Թեմատիկ խմբի՝ «Գետ», «Ձուկ», «Ջրաղաց», «Յորեն», «Մաղ», «Գարի» առաջին երկու հանելուկների բովանդակային շրջանակում հոգեւորը, թվում է, ցայտուն չի արտացոլվել, բայց քննված հանելուկների համաբնագրում պատասխաններն արդեն ընկալվում են իբրեւ խորհրդանշաններ՝ ուղղորդելով ըմբռնելու նաեւ հանելուկային պատկերների խորհուրդը.

Գետ – Հիսուսի մկրտության ավազան (Մատթ. Գ. 13–17):

Ձուկ – բարի պտուղ (Մատթ. է. 9), «Գետ» հանելուկում՝ «բարոյն գիւտ», Հիսուսի Աստվածության եւ նրա փրկարար առաքելության խորհրդանշ, Հիսուս Քրիստոս²⁸:

Անկեմդան, ահեղական, ընթրիք, մարդկանց որդիներ («Ջաղաց» հանելուկը) – Հիսուսի մարդեղացման խորհրդաբանությունը:

Կենաւար («Ջաղաց» հանելուկը) – Հիսուս Քրիստոս:

Յորեն («Յորեն» հանելուկը) – Հիսուս Քրիստոս:

Երեւան, 2021, էջ 200:

²⁷ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ, Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին, աշխատասիրությամբ Դուկաս արեղա Զաքարյանի, Ս. էջմիածին, 2005, էջ 281–282:

²⁸ Իխտիս՝ «ձուկ» բառը՝ Հիսուս Քրիստոս Աստուծու Որդի Փրկիչ մեկնաբանությամբ, խորհրդանշել է Քրիստոսին դեռ քրիստոնեւորական առաջին դարերում: Հետագայում այն կիրառվել է խորհրդանշական եղանակով. տէն Ռավեննայի Կլասի Սուրբ Ապոլինար եկեղեցու Ավագ խորանի խաչը՝ «Իխտիս» եւ «Աշխարհի լույսը» մակագրություններով: Վ. Դեւրիկյանը գրում է. «Քանի որ Պաշտօնակերպությունը այստեղ ներկայացված է սիմվոլիկ մեկնաբանմամբ, ուստի Փրկչին ներկայացնող խաչի վերելում Քրիստոսի փոխարեն գրված է «Իխտիս»: Խաչի ներքեւում էլ գրված է «Salius mundi»՝ աշխարհի փրկությունը»: Վ. Դեւրիկյան, Պաշտօնակերպությունը եւ Վարդավառի տոնը, Երեւան, 2006, էջ 5:

Մանանա («Մաղ» հանելուկը) – Հիսուս Քրիստոս:

Ինչ վերաբերում է «Գարի» հանելուկին, բնորոշումները թեև այն-
քան էլ հստակ չեն՝ Շնչառաց կենդանաբար // Եւ անսրբոցն սրբաբար,
բայց ակնհայտորեն շեշտվում է գարու՝ որպես երկրորդ հացահատիկա-
յին բույսի կենսական ուժը՝ բանականների համար առողջարար, աշխա-
տողների համար՝ բժշկարար: Հանելուկի վերջին երկու տողերն ասես
Քրիստոսի ձեռքով գարեհացի բազմացման պատումի (Յովհ. 2. 8–11)
այլաբանությունն են.

Յաստուածային ձեռքն բարձար,
Յոհնաբեղունսն բազմեցար (էջ 267):

Շնորհալու հանելուկների ընդհանուր շարքում առանձին խումբ են
կազմում բույսերին նվիրված հանելուկները²⁹: «Յորեն», «Գարի» խորա-
գրով հանելուկները մյուս բույսերին վերաբերողներից առաջ՝ հոգեւոր
կրոնական հասկացություններին հաջորդող շարքում դնելը նույնպես
ցույց է տալիս, որ ցորենազգիների դեպքում Շնորհալին դրանք դիտար-
կել է ցորենի հատիկի պարունակած հոգեւոր խորհրդի տեսանկյունից
եւ ոչ թե պարզապես բուսատեսակ լինելով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգվածում քննվում է Ներսես Շնորհալու՝ «Գեա», «Ջուկն», «Ջրա-
ղաց», «Յորեն», «Մաղ», «Գարի» պատասխան-խորագրերով հանելուկնե-
րի խումբը: Ստեղծագործությունները վերլուծվում են՝ նրանցում պատ-
կերված հանելուկային բանաձևերի, խորհրդանշանների իմաստային
շերտերի մեկնաբանությամբ:

Ցույց է տրվում, որ քննվող հանելուկների թեմատիկ խմբում նշա-
նակիր են թե՛ վերնագրերը՝ իբրեւ բառ-խորհրդանշաններ, թե՛ հանելու-
կային պատկերները: Հանելուկներում կիրառված փոխաբերություննե-
րը հոգեւոր իմաստավորումով այլաբանորեն խորհրդանշում են Քրիս-
տոսին՝ Ջուկ, Բարոյն գիւտ, Կենաբար, Յորեն, Մանանա, կամ կապվում
նրա երկրային կյանքի դրվագների հետ՝ անկենդան, ահեղական, ընթրիք,
մարդկանց որդիներ, մեռնել, կենդանանալ, համբարձվել, պայծառանալ, մե-
կի փոխարեն անթիվ տալ:

²⁹ Տե՛ս Աս. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), էջ 299–309:

Կիրառված խորհրդանշանների շուրջ են համախմբվում հանելուկները եւ ընդհանուր շարքում դառնում ինքնուրույն, առանձին միավորների գեղարվեստական խումբ՝ հստակ նպատակադրումով: Հանելուկների գաղափարական միասնության եւ խորհրդանշանների այլաբանական ընկալմանը նպաստում է նաեւ հանելուկների դասավորվածության ներքին տրամաբանությունը, որով կարծես պատկերագծվում է Քրիստոսի երկրային գործունեությունը՝ մկրտությունից մինչեւ թաղում եւ հարություն:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ներսես Շնորհալի, հանելուկների թեմատիկ խումբ, գետ, ձուկ, ցորեն, ջաղաց, մաղ, գարի, խորհրդանշան, այլաբանություն:

РЕЗЮМЕ

В статье предпринимается попытка проанализировать ряд загадок Св. Нерсеса Шнорали с ответами-подсказками на заголовках, как «Река», «Рыба», «Мельница», «Пшеница», «Решето», «Ячмень». Цель исследования направлена на выявление смысловых пластов, которые отражены в загадках в виде формул и символов.

Одна из аксиом исследования состоит в том, что в тематической группе анализируемых загадок маркируются как загадочные образы, так и заголовки в виде слов-символов. Метафоры, используемые в загадках, имеют духовно-аллегорический смысл, символизируя Христа: Рыба, Добро, Благодетель, Пшеница, Манна, или загадки связаны с эпизодами земной жизни Христа: безжизненный, грозный, вечер, сыны человеческие, умирать, оживиться, возноситься, сиять.

Глубокие смысловые пласты загадок отражены через символические заголовки. Со смысловой и структурной точки зрения каждая загадка выступает как самостоятельная единица с четкой целью, но при этом она объединена диалектической связью с рядом других загадок. На идейно-смысловое единство загадок способствует также внутренняя логическая позиция, которая как бы изображает земную деятельность Христа, от крещения до погребения и воскресения.

SUMMARY

The article attempts to analyze a series of riddles by St. Nerses the Graceful with clue-answers on the titles, such as “River”, “Fish”, “Mill”, “Wheat”, “Sieve”, “Barley”. The research aims at identifying the semantic layers of the riddles reflected in the form of formulae and symbols.

One of the axioms of the study is that in the thematic group of the analyzed riddles both the images of riddles and their names are marked as word-symbols. Metaphors used in the riddles have a spiritual-allegorical meaning, symbolizing Christ: Fish, Good, Grace, Wheat, Manna; or riddles related to episodes of Christ’s earthly life: lifeless, formidable, dinner, sons of men, die, revived, ascension, radiance.

The deep semantic layers of the riddles are reflected through symbolic titles. From a semantic and structural point of view, each riddle acts as an independent unit with a clear purpose. At the same time, a thematically independent riddle is in dialectical unity with a number of other riddles. The ideological and semantic unity of the riddles is also affected by the internal logical position, which seems to illustrate the earthly life of Christ, from baptism to burial and resurrection.

